«Թրանսփարենսի ինտերնեյշնլ» կազմակերպության
«Կոռուպցիայի ընկալման 2012թ. ինդեքս»

«Թրանսփարենսի ինտերնեյշնլ» (Transparency International) կազմակերպությունը 2012թ. դեկտեմբերի 5-ին հրապարակել է **«Կոռուպցիայի ընկալման 2012թ. ինդեքս»** ամենամյա հետազոտությունը, որում ներկայացվել է աշխարհի 176 երկրների, այդ թվում՝ Հայաստանի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակը:

2012թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» բաղադրյալ ինդեքս է՝ «0»-ից մինչև «100» միջակայքում, ընդ որում՝ «100»-ը համապատասխանում է կոռուպցիայից լիովին ձերբազատված երկրներին, իսկ «0»-ն՝ լիովին կոռումպացված երկրներին: Ինդեքսի կառուցման համար «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» օգտագործում է անկախ կազմակերպությունների կողմից տարբեր երկրներում գործարարների և վերլուծաբանների շրջանում իրականացված հարցումների և հետազոտությունների արդյունքները:

Հայաստանի 2012թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի գնահատման համար «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» որպես աղբյուր է օգտագործել 6 միջազգային կազմակերպությունների կատարած 6 հետազոտությունների՝ կոռուպցիային վերաբերող գնահատականները: Մասնավորապես, վերցվել են **Համաշխարհային տնտեսական համաժողովի** կողմից 2012թ.-ին իրականացված Գործարարների կարծիքների հարցումների (Executive Opinion Survey) արդյունքները, **Համաշխարհային բանկի** «Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատման» 2011թ. ինդեքսը, **Բերտելսմանի հիմնադրամի** «Տրանսֆորմացիայի» 2012թ. ինդեքսը, **Ֆրիդոմհաուզի** «Ազգերը անցումային փուլում» 2012 թ. ինդեքսը, **Գլոբալ Ինսայթի** 2012թ. «Երկրի ռիսկերի վարկանիշերը» և **Քաղաքական ռիսկերի ծառայության խմբի** «Երկրի միջազգային ռիսկի ուղեցույցի» 2012թ. գնահատականները: Նշված ինդեքսների հիմքում ընկած են Հայաստանի 2010-2012թթ. տվյալները[1]:

<u>Հայաստանի գնահատականները.</u> Հայաստանի պետական հատվածում կոռուպցիայի ընկալման ինդեքսը **բարելավվել է** և 2012թ. համար գնահատվել է «34» միավոր՝ նախորդ տարվա «26» միավորի փոխարեն:

«Թրանսփերենսի ինտերնեյշնլի» գնահատմամբ Հայաստանը «Կոռուպցիայի ընկալման 2012թ. ինդեքսով» աշխարհի 176 երկրների թվում 105-112-րդ տեղերը կիսում է Ալժիրի, Բոլիվիայի, Գամբիայի, Կոսովոյի, Մալիի, Մեքսիկայի և Ֆիլիպինների հետ: Նկատենք, որ նախորդ տարի աշխարհի 183 երկրների թվում Հայաստանը կիսում էր 129-133-րդ տեղերը՝ Դոմինիկյան Հանրապետության, Հոնդուրասի, Ֆիլիպինների և Սիրիայի հետ: Նկատենք, որ համաձայն «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» մեթոդաբանության, երկրների ինդեքսները ըստ

[1] **Corruption Perceptions Index 2012: Full Source Description/Transparency International, 2012.**

տարիների համեմատելու համար պետք է հիմք ընդունել ոչ թե երկրի տեղը (կարգը), այլ գնահատականները[2]:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. 2012թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» գնահատականով (34 միավոր) Հայաստանը՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից գերազանցում է Ալբանիային, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ զիջում է Մերձբալթյան երկրներին, Վրաստանին և Մոլդովային (տե՛ս աղյուսակ 1): Հայաստանի հարևան երկրների պետական հատվածում կոռուպցիայի մակարդակը հետևյալն է. աշխարհի 176 երկրների թվում Վրաստանը գրավում է 51-րդ տեղը (52 միավոր), իսկ Ադրբեջանը՝ 139-րդ տեղը (27 միավոր): Պետական հատվածում կոռուպցիայի ընկալման ցուցանիշով Թուրքիան գրավում է 54-րդ տեղը (49 միավոր): Նախկին ԽՍՀՄ երկրների շարքում առավել քիչ կոռումպացվածը Էստոնիան է, որը զբաղեցնում է 32-րդ տեղը (64 միավոր) և ամենաշատ կոռումպացվածը՝ Թուրքմենստանն ու Ուզբեկստանն են, որոնք գրավում են 170-րդ տեղը (17 միավոր):

Համաձայն «Թրանսփարենսի ինտերնեյշնլ» կազմակերպության հետազոտության, 2012թ.-ին աշխարհի 176 երկրների թվում առավել քիչ կոռումպացված երկրների առաջին տասնյակում են Դանիան, Ֆինլանդիան, Նոր Զելանդիան, Շվեդիան, Սինգապուրը, Շվեյցարիան, Ավստրալիան, Նորվեգիան, Կանադան, Հոլանդիան, իսկ առավել կոռումպացված երկրների թվում՝ Իրաքը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Մյանմարը, Սուդանը, Աֆղանստանը, Հյուսիսային Կորեան և Սոմալին:

Աղյուսակ 1-ում ներկայացված է նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում և Թուրքիայում 2012թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսների» համեմատական նկարագիրը:

[2] **Աղբյուրը՝** http://files.transparency.org/content/download/537/2229/file/2012_CPI_brochure_EN.pdf:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» ըստ «Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության գնահատականների (2012 թ.)[3]

Աղյուսակ 1

Երկիր	Դիրքը աշխարհի 176 երկրների շարքում	«Կոռուպցիայի ընկալման ինդեքս»	Վստահելիության միջակայք		Հետազոտություն ների քանակ
			Նվազագույն	Առավելագույն	
Էստոնիա	32	64	59	69	8
Սլովենիա	37	61	55	67	8
Լեհաստան	41	58	55	62	10
Հունգարիա	46	55	49	61	10
Լիտվա	48	54	45	63	7
Վրաստան	51	52	42	62	6
Չեխիա	54	49	44	53	10
Լատվիա	54	49	42	55	6
Թուրքիա	54	49	45	52	9
Սլովակիա	62	46	39	53	8
Խորվաթիա	62	46	41	51	8
Ռումինիա	66	44	38	50	8
Մակեդոնիա	69	43	35	51	6
Բոսնիա-Հերց.	72	42	38	46	7
Բուլղարիա	75	41	35	47	8
Մոնտենեգրո	75	41	34	49	4
Սերբիա	80	39	35	44	7
Մոլդովա	94	36	31	40	8
Հայաստան	***105***	***34***	***29***	***38***	***6***
Կոսովո	105	34	32	37	3
Ալբանիա	113	33	30	36	7
Բելառուս	123	31	25	37	5
Ղազախստան	133	28	21	35	8
Ռուսաստան	133	28	25	32	9
Ադրբեջան	139	27	23	31	6
Ուկրաինա	144	26	24	29	8
Ղրղզստան	154	24	21	27	6
Տաջիկստան	157	22	15	28	5
Թուրմենստան	170	17	12	22	3
Ուզբեկստան	170	17	14	20	6

[3] **Աղբյուրը՝** http://www.transparency.org/cpi2012/in_detail: